ԱՐՊՀ ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԻՍՏ

Հունիսի 15-ին տեղի է ունեցել ԱրՊՀ ռեկտորատի նիստ, որը վարում էր ռեկտոր Արմեն Սարգսյանը: Նիստին ռեկտորն անդրադարձել է հունիսի 9-ին ՀՀ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից ԱրՊՀ-ում առցանց եղանակով իրականացված որակի ներքին ապահովման համակարգերի գործունեության մշտադիտարկման արդյունքներին, նախանշել հետագա անելիքները:

Օրակարգի հարցով ԱրՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ. Սահակյանը տեղեկատվություն է ներկայացրել ամփոփիչ ատեստավորման ընթացքի մասին՝ նշելով, որ գործընթացն ընթանում է բնականոն, առանց որևէ էական խնդիրների ու խոչընդոտների:

Օրակարգի հաջորդ հարցերով ֆակուլտետների դեկանները հանդես են եկել տեղեկատվություններով, որոնք վերաբերում էին կիսամյակային ստուգումների ընթացքին և հեռակա ուսուցման համակարգի երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացի ընթացքին, որոնք իրականացվում են առցանց եղանակով:

ԱրՊՀ ռեկտորն անդրադարձել է նաև մագիստրատուրայի ընդունելության առաջին փուլի նախապատրաստական աշխատանքներին, որի վերաբերյալ ռեկոտրատը որոշում կկայացնի առաջիկայում:

Քննարկված հարցերի վերաբերյալ ռեկտորը հանձնարարականներ է տվել համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին՝ հորդորելով դրսևորել պատասխանատվություն ստեղծված իրավիճակում ուսումնական գործընթացը պատշաճ կազմակերպելու համար և հետևելով համավարակի տարածման կանխարգելման նպատակով սահմանված բոլոր պահանջներին:

ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ ԵՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հունիսի 10-ից մեկնարկել են ԱրՊՀ բակալավրիատի առկա և հեռակա, մագիստրատուրա առկա ուսուցման համակարգերի 2019-2020 ուսումնական տարվա ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման քննությունները, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունները ավանդական եղանակով:

Ուսանողների՝ հինգ հոգուց բաղկացած խմբերի համար նախապես սահմանվել էր համալսարան ներկայանալու ժամանակացույց: Ըստ հաստատված ժամանակացույցի՝ ուսանողները փոքր խմբերով ներկայացել են բուհ դիմակներով և ձեռնոցներով՝ հետևողականորեն պահպանելով համավարակի կանխարգելմանն ուղղված բոլոր պայմանները:

Ռեկտոր Արմեն Սարգսյանը հավաստիացրել է, որ պահպանվել են բոլոր անհրաժեշտ պայմանները՝ ուսումնական տարին պատշաճ մակարդակով ավարտին հասցնելու համար:

Նրա խոսքով՝ համաձայն նախապես ընդունված ռեկտորատի որոշման՝ հանրապետության սահմաններից դուրս, ինչպես նաև պարետատան որոշմամբ տեղաշարժի սահմանափակման մեջ գտնվող ուսանողների ստուգումները կազմակերպվել են հեռավար եղանակով:

Այս տարի շուրջ 747 շրջանավարտ է ունեցել ԱրՊՀ-ն, և, ինչպես ռեկտորն է նշել, քննարկումների և խորհրդակցությունների արդյունքում է ընդունվել ստուգումներն ավանդական եղանակով կազմակերպելու վերաբերյալ որոշում, որպեսզի չլինեն թերացումներ գործընթացի արդյունավետությունն ապահովելու հարցում:

«Բոլոր այն լսարաններում, որտեղ կազմակերպվել են ստուգումները, իրականացվել են ախտահանման աշխատանքներ, ախտահանումը պարբերաբար կրկնել են, պահպանվել են համավարակի տարածման կանխարգելմանն ուղղված անվտանգության բոլոր կանոնները»,-նշել է ռեկտորը:

Ուսումնական գործընթացի վերահսկման բաժնի պետ Գոհար Գասպարյանի խոսքով՝ գործընթացն ընթացել է բնականոն հունով, արտառոց որևէ խնդիր չի արձանագրվել:

Ամփոփիչ ատեստավորման քննությունները, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունները տևել են մինչև հունիսի 15-ը:

«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ
Հիմնադիր՝ «ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ
Հրատարակվում է 1994 թվականից
Խմբագիր՝ Զ. Սառաջյան
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91
Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում
Իմացի՛ր քո համալսարանի մասին:
Այցելի՛ր asu.am կայք:
www.asu.am

ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»

№ 03(226)
Հունիս-հուլիս 2020

ԱՐՊՀ ՌԵԿՏՈՐ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ԲՈՒՀԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ

Սիրելի՛ շրջանավարտներ

Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիդ՝ բուհն ավարտելու կապակցությամբ: Արցախի պետական համալսարանը եղել և մնում է մեր երկրի համար մասնագետներ պատրաստող այն դարբնոցը, որը մշտապես հպարտանալու առիթ է ունեցել իր թողարկած կադրերով: Համոզված եմ, որ Դուք ևս համալրելու եք մեր հանրապետության այն լավագույն մասնագետների շարքը, ովքեր իրենց մասնագիտական ներուժն ու կարողությունները ծառայեցնում են ի նպաստ մեր հայրենիքի բարօրության ու զարգացման: Ձեր կյանքի ճանապարհին մշտապես հիշեք, որ լավ մասնագետ լինելուց առաջ պետք է լինել լավ մարդ, որովհետև բոլոր կոչումներն ու պաշտոնները ստորադասվում են մարդ կոչմանը: Լիահույս եմ, որ Ձեր մասնագիտական կարողությունների ու մարդկային որակների շնորհիվ կարողանալու եք կյանքում գտնել Ձեր տեղը:

Այսօր դժվարին պայմաններում եք հրաժեշտ տալիս բուհին: Աշխարհը պատուհասած համավարակի և դրա տարածման դեմ ձեռնարկվող կանխարգելիչ միջոցառումների պայմաններում, ցավոք, հնարավորություն չեղավ ավանդույթ դարձած հանդիսավոր պայմաններում հանձնելու Ձեր դիպլոմները, սակայն, համոզված եմ, որ անգամ այս պայմաններում Ձեր կյանքի այս դրվագը լինելու է անմոռանալի ու ջերմ հիշողություններ արթնացնող ամբողջ կյանքի ընթացքում:

Մաղթում եմ ձեզ հաջողություններ, առողջ եղեք:

ԱՐՊՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԴԻՊԼՈՄՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Հունիսի 22-ից ԱրՊՀ-ում մեկնարկել է 2019-2020 ուսումնական տարվա բուհի շրջանավարտների դիպլոմների շնորհումը: 2019-2020 ուսումնական տարում բուհը թողարկում է 747 շրջանավարտ, որից 577-ը՝ բակալավրի, 170-ը՝ մագիստրոսի կոչումով: Բակալավրիատի 577 շրջանավարտներից 76-ը բուհն ավարտել են գերազանցության դիպլոմով:

ԱրՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ.Սահակյանի խոսքով՝ այս տարվա շրջանավարտների մասով գրանցվել է բարձր առաջադիմություն՝ նախորդ տարվա համեմատ: Ամփոփիչ ատեստավորման քննությունների, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի արդյունքները գոհացուցիչ են:

ԿԱՅԱՑԵԼ Է ԱՐՊՀ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

Հունիսի 29-ին կայացել է ԱրՊՀ գիտխորհրդի նիստ, որին ներկա էր նաև ԱՀ ԿԳՄ նորանշանակ նախարար Լուսինե Ղարախանյանը: Ողջունելով ներկաներին՝ ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը գիտխորհրդի կազմի անունից շնորհավորել է նորանշանակ նախարարին՝ մաղթելով արդյունավետ գործունեություն:

Օրակարգի առաջին հարցով սահմանվել են ԱրՊՀ 2020-2021 ուսումնական տարվա բակալավրիատի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի, հայցորդության ուսման վճարի տարեկան չափերը:

ԱրՊՀ հավատարմագրման գործընթացի մասին տեղեկատվություն է ներկայացրել որակի ապահովման բաժնի վարիչ Հասմիկ Մինասյանը՝ նշելով, որ արդեն կատարվել են հիմնական աշխատանքները և դրանք գտնվում են ավարտական փուլում: Խոսելով աշխատանքների ավարտական փուլի մասին՝ Հ. Մինասյանն ընդգծել է, որ այն առավելապես կապված է արտակարգ իրավիճակում ԱրՊՀ կողմից առցանց եղանակով ուսումնական գործընթացի կազմակերպման ուղղությամբ իրականացված աշխատանքների և դրանց ներկայացման հետ:

2019-2020 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների մասին ամփոփ տեղեկատվություն է ներկայացրել ԱրՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ. Սահակյանը: Պրոռեկտորը ներկայացրել է հիմնական ցուցանիշները՝ խոսելով նաև թերացումների մասին:

ԱՀ ԿԳՄ նախարար Լուսինե Ղարախանյանն իր խոսքում նշել է, որ COVID-19-ը իր հետ բերել է նոր ռազմավարություններ մշակելու մարտահրավերներ: Նրա խոսքով՝ իրենց պարտականությունները բարեխղճորեն չկատարող դասախոսների ծանրաբեռնվածությունը պետք է վերանայել նոր ուսումնականից: Որակի ապահովումը սկսվում է նրանից, երբ յուրաքանչյուրը պատճաշ մակարդակով կատարում է իր պարտականությունները:

Գիտխորհուրդը օրակարգի հաջորդ հարցերով տպագրության է երաշխավորել ԱրՊՀ «Գիտական տեղեկագիր» պարբերականի հերթական համարը, հաստատել գիտխորհրդի կազմում փոփոխություն կատարելու մասին հարցը, անցկացրել ԱրՊՀ տնտեսագիտության տեսության և կառավարման, պատմության և քաղաքագիտության ամբիոնների վարիչների թափուր պաշտոնների մրցույթը:

Քվեարկության արդյունքում ԱրՊՀ տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի վարիչ է ընտրվել տ.գ.թ., դոցենտ Շուշան Ասրյանը, պատմության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ՝ պ.գ.թ., դոցենտ Նունե Սարումյանը:

Գիտխորհուրդը հաստատել է նաև Իսկուհի Նիկոլայի Ավանեսյանին դոցենտի կոչում շնորհելու և այն ՀՀ ԲՈԿ-ի վավերացմանն ուղարկելու մասին հարցը:

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ «ԱՐՑԱԽԻ ԺՈՂՈՎՐԴԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ» ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐՆԵՐԸ

Արցախի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ տպագրվել են «Արցախի ժողովրդագիտությունը» մատենաշարի առաջին և երկրորդ հատորները՝ «Արցախի ժողովրդագիտությունը. Ազգագրություն»՝ աշխատասիրությամբ և ընդհանուր խմբագրությամբ բ.գ.թ., դոցենտ, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ Արմեն Սարգսյանի:

«Արցախի ժողովրդագիտությունը» մատենաշարը, որը հիմնադրվել է Արցախի պետական համալսարանի գիտխորհրդի որոշմամբ և նվիրվում է մայր բուհի հիմնադրման 50-ամյակին, ընդգրկում է Արցախի ժողովրդագիտության երեք բնագավառներին՝ ազգագրությանը, բանահյուսությանն ու բարբառին վերաբերող այն հիմնական ուսումնասիրությունները, աշխատությունները, գիտական զեկուցումները, ճանապարհորդական նոթերը, հուշագրությունները և այլ նյութերը, որոնք գրառվել ու հրատարակվել են հայ և օտարազգի տարբեր ազգագրագետների, բանահավաքների, բարբառագետների, այլ բնագավառների գիտնականների, հասարակական գործիչների, գրողների, Շուշի քաղաքի և որոշ գյուղերի ուսումնական հաստատությունների ուսուցիչների ու տեսուչների կողմից 19-րդ դարի կեսերից առ այսօր: Յուրաքանչյուր բնագավառին վերաբերող առաջին հատորի առաջաբանում տրվում է տվյալ բնագավառի ուսումնասիրության պատմությունը, իսկ եզրափակող հատորի վերջում՝ ամբողջական մատենագիտական ցանկը: Նյութերը ներկայացվում են որոշակի խմբագրությամբ և սրբագրությամբ (բացառությամբ բարբառով գրառված նյութերի)՝ ընդհանուր առմամբ համապատասխանեցնելով ուղղագրության ու տառադարձության արդի սկզբունքներին: Բնօրինակներում ընդգրկված լուսանկարները, գծագրերը և այլ բնույթի պատկերները, վերջում տրված ծանոթագրությունները, անձնանունների ու տեղանունների ցանկերը հատորաշարում հիմնականում չեն ներառվում: Մատենաշարի առաջին և երկրորդ հատորներում ընդգրկված են նախախորհրդային և խորհրդային շրջաններում կատարված՝ Արցախի ազգագրությանը վերաբերող արժեքավոր ուսումնասիրություններ:

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՐՑԵՐ

Հունիսի 5-ին ԱրՊՀ-ում տեղի է ունեցել ռեկտորատի նիստ, որի ընթացքում քննարկվել են ուսումնական գործընթացին վերաբերող հարցեր: Առկա և հեռակա ուսուցման համակարգերի հեռավար ուսուցման ընթացքի մասին տեղեկատվությամբ հանդես են եկել ֆակուլտետների դեկանները՝ նշելով, որ գործընթացն ընթանում է բնականոն հունով:



Ավարտական խմբերի ամփոփիչ ատեստավորման նախապատրաստական աշխատանքների մասին տեղեկատվություն է ներկայացրել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ.Սահակյանը: Ըստ տեղեկատվության՝ նախանշված աշխատանքներն իրականացվում են, համապատասխան լսարանները տեխնիկապես ապահովվել են, գործընթացը շարունակվում է՝ ամփոփիչ ատեստավորման ստուգումները պատշաճ մակարդակով կազմակերպելու նպատակով:

Օրակարգի հաջորդ հարցը վերաբերում էր հանրակացարանաբնակ ուսանողների մուծած վճարների մասնակի վերադարձման գործընթացին: ԱրՊՀ ռեկտորը նշել է, որ ներկայումս այդ ուղղությամբ աշխատանքներ են տարվում և ճշտվում են այն ուսանողների անունները, ովքեր հանրակացարանում բնակվելու համար վճարել էին նաև երկրորդ կիսամյակի վարձը: Մարտի 1-ից մինչև հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում հանրակացարանում բնակվելու համար կատարած վարձավճարները վերադարձվելու են ուսանողներին:

Օրակարգի մյուս հարցը հունիսի 9-ին կայանալիք ԱրՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման մշտադիտարկման նախապատրաստական աշխատանքներին էր վերաբերում: Ռեկտորատը քննարկել և ամփոփել է այդ ուղղությամբ կատարված աշխատանքի առանցքային կետերը՝ նախանշելով անելիքները:

ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը քննարկված հարցերի վերաբերյալ հանձնարարականներ է տվել համապատասխան ստորաբաժանումներին առկա թերացումների վերացման ուղղությամբ՝ հորդորելով ստեղծված իրավիճակում դրսևորել պատասխանատվություն և ամեն ինչ անել ուսումնական գործընթացը արդյունավետ կազմակերպելու, ուսումնական տարին պատշաճ մակարդակով ավարտին հասցնելու համար:

ՀՀ «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՊՀ-ՈՒՄ ԱՌՑԱՆՑ ԵՂԱՆԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ Է ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

Հունիսի 9-ին ՀՀ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից ԱրՊՀ-ում առցանց եղանակով իրականացվել է որակի ներքին ապահովման համակարգերի գործունեության մշտադիտարկում:

Հիմնադրամի կողմից Zoom հարթակի միջոցով իրականացված առաջին քննարկմանը մասնակցում էին ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, պրոռեկտորները, ՀՀ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն Ռուբեն Թոփչյանը, փորձագետներ:

Քննարկման ընթացքում համալսարանականները անդրադարձել են երկրում հայտարարված արտակարգ իրավիճակում ուսումնական գործընթացի կազմակերպմանը, հեռավար ուսուցման ընթացքում ունեցած ձեռքբերումներին ու թերացումներին, խոսել ի հայտ եկած խնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկված քայլերի, անելիքների և ուսումնական գործընթացի ու որակի բարելավմանը վերաբերող հարցերի մասին:

Քննարկման մասնակիցները պատասխանել են նաև փորձագետների կողմից հնչած հարցերին:

Հաջորդիվ նման առցանց հանդիպում- քննարկումներ են իրականացվել նաև ամբիոնների վարիչների, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների, ուսանողների, որակի ապահովման բաժնի պատասխանատուների և ինքնավերլուծություն իրականացրած խմբերի ներկայացուցիչների հետ:

Վերջում ամփոփվել են մշտադիտարկման աշխատանքները: